Դիտողություններ եւ առաջարկություններ «Պետական տեղեկատվական համակարգի կառավարչական համակարգը ստեղծելու եւ դրա կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ նաեւ՝ Նախագիծ) վերաբերյալ

Նախագծի հիմքում «Հանրային տեղեկությունների մասին»ՀՀ օրենքի (այսուհետ նաեւ՝ ՀՏ օրենք) 20-րդ հոդվածի 2-րդ մասն է, որի համաձայն՝ պետական տեղեկատվական համակարգին աջակցող համակարգերը ստեղծվում (ձևավորվում) են Կառավարության որոշմամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Կառավարությունը հաստատում է նաեւ նշված համակարգերի կիրառման կարգերը (կանոնակարգերը), եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Այդ համակարգերն են՝

1) տվյալների դասակարգման համակարգը.
2) ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքը.
3) տեղեկատվական համակարգերի անվտանգության միջոցառումների համակարգը.
4) տվյալների փոխանակման շերտը.
5) պետական տեղեկատվական համակարգի (ՊՏՀ) կառավարչական համակարգ:

Այնինչ նախագիծն առերեւույթ դուրս է եկել լիազորող նորմի շրջանակներից, մասնավորապես

- սահմանում է մինչեւ «Հանրային տեղեկությունների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը ստեղծված և գործող տվյալների շտեմարանների լիազորված մարմինների պարտականությունը՝ պատրաստելու տվյալների շտեմարանի փաստաթղթերը մինչև 2026 թվականի նոյեմբերի 1-ը: Նման լիազորող նորմ ՀՏ օրենքում առկա չէ:
- սահմանում է հասկացություններ, որոնք արդեն իսկ սահմանված են վերաբերելի օրենքներով (օրինակ՝ տվյալների շտեմարանի հասկացությունը), կամ սահմանում է օրենքներով արդեն իսկ սահմանված հասկացությունների ձեւափոխված տարբերակներ (օրինակ՝ տվյալների փոխանակման շերտի անգլերեն անվանումը, հապավումը, որոնք նախագծում այլեւս չեն հանդիպում)
- սահմանում է ՊՏՀ-ի կառավարման սկզբունքները - լիազորող նորմի շրջանակները հստակորեն սահմանված են ՀՏ օրենքով եւ դրանք չեն ներառում նման սկզբունքներ սահմանելու հնարավորությունը
- սահմանում է տվյալների շետամարանների ստեղծումը, ստեղծման մերժումը, ծտեմարանի աշխատանքի դադարեցումը, ինչպես նաեւ տվյալների շտեմարանում հավաքագրված տվյալների կազմը փոխելը - ՀՏ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը չի նախատեսում նման լիազորություն
- սահմանում է ինքնավար մարմնի գործառույթները ՊՏՀ ԿՀ անխափան գործունեությունը եւ անվտանգությունն ապահովելու շրջանակներում - ՀՏ օրենքի 20-

րդ հոդվածի 2-րդ մասը չի նախատեսում նման լիազորություն, ավելին, ինքնավար մարմնի գործառույթների վերաբերյալ հարցերն առերեւույթ կարգավորման են ենթակա «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի շրջանակներում։

Առաջարկում ենք Նախագիծը խմբագրել՝ համապատասխանեցնել ՀՏ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի նորմի լիազորության շրջանակին, բացառել Տ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասից չբխող կարգավորումները։